

Հարցում.

Մույն թվականի սեպտեմբերի 9-ին www.hetq.am կայքում լույս էր տեսել «Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան դպրոցի կուլեկտիվը կարծում է, որ դպրոցը «հալածյալի կարգավիճակում է» վերնագրով հոդվածը: Լինելով նյութի հեղինակը՝ ինձ հետաքրքրում է, թե ի՞նչ ընթացք է տրվել հարցին: Դպրոցի աշխատակազմից տեղեկացա, որ իրենք Արագածոտնի մարզպետարանից տեղեկություն են ստացել, որ խնդիրը լուծման փուլում է:

Հարցեր.


1. Ովքե՞ր են հարցի լուծման պատասխանատուները:
2. Ի՞նչ ժամկետում է հարցը լուծում ստանալու:
3. Դպրոցը ամբողջությամբ վերանորոգվելո՞ւ (հիմնանորոգվելու) է:
4. Կա՞ն արդյոք հովանավորներ, թե՞ պետական միջոցներով է արվելու վերանորոգումը:

Լրագրող՝ Անուշ Ամիրբեկյան

Աշխատանքի վայրը՝ www.hetq.am

Բնակության հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Օշական, Ամաստունու փողոց, տուն 26:

Կանխավ շնորհակալություն:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ**

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4
0201 ր. Аштарак, В. Петросян 4
0201 с. Ashtarak, V. Petrosyan 4

Հեռ. .0232-3-3835
Тел. 0232-3-3835
Tel. 0232-3-3835

-----N-----

**ՀՀ Արագածոտնի մարզի
Օջական համայնքի Ամսփունու փողոցի N 26 փան բնակիչ
լրագրող Անուշ Ամիրբեկյանին**

Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի վերանորոգման վերաբերյալ Ձեր հարցման կապակցությամբ ներկայացնում ենք հետևյալ տեղեկատվությունը.

1. << Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ը մարզպետարանի ենթակայության է: ՅՈՒՆԻՍԵՖ (UNICEF) միջազգային կազմակերպությանը դպրոցի վերանորոգման խնդիրը ներկայացվել է մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության կողմից՝ դպրոցի սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման նպատակով:
2. Հարցի լուծման ժամկետները կորոշվեն վերը նշված ուսումնասիրության արդյունքներով պայմանավորված:
3. Վերը նշված ուսումնասիրությանից հետո դպրոցի հիմնանորոգման, կամ սեյսմիկ խոցելիության բարձր մակարդակի դեպքում՝ նոր դպրոցի կառուցման անհրաժեշտություն կլինի:
4. Աշտարակի Վ. Պետրոսյանի անվան հիմնական դպրոցի հիմնանորոգումը նախատեսված է իրականացնել ՀՀ պետական բյուջեով 2017 թվականի քաղաքաշինության ծրագրերով:

Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ